ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 27'' փետրվարի 2020 թվականի N4-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2020թ. փետրվարի 27-ի հերթական նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.ՀՀ լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:
2.Շիրակամուտ համայնքի 2020թ.-ի տարեկան աշխատանքային պլանը/ՏԱՊ/ հաստատելու մասին:
3. Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Հ.Մազմանյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

, 27" փետրվարի 2020 թվականի թիվ 5 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, ,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով,

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

- Հաստատել Շիրակամուտ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 1:
- Հաստատել 2019 թվականի Շիրակամուտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 2:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Նալբանդյան			
Հ.Մազմանյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար՝ Վ.Երանոսյան

Հավելված 1
Շիրակամուտ համայնքի ավագանու
,,27 " փետրվարի 2020թ. թիվ 5-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Շիրակամուտ համայնքի2019թ. բյուջեն կատարվել է
ա) եկամուտների գծով `100,2%- ով, 59367,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 59481,0 հազար դրամ:
- Սեփական եկամուտները (բացի տրանսվերտներից և պատվիրակված լիազորություններից) նախատեսված 12239,3 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 12352,9 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 100,9 %
- ով:
- Պաշտոնական դրամաշնորհների գծով (Համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա և այլ դոտացիա) նախատեսված 46427,9 հազար դրամի դիմաց կազմել են 46427,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 %:
- Վարչական բյուջեի Տարեսկզբի մնացորդը կազմել է 0 -
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 439,5 հազ.դրամ:

Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները նախատեսված 4049,9 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 4263,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 105%:

Գույքահարկ

Գույքահարկի գծով եկամուտները նախատեսված4130,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է4144,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100,4%:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերը նախատեսված 380 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել են 348,6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 92%:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճար

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարը նախատեսված 1139,4 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1676,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 147,2 %:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտ է հանդիսացել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 439,5 հազ.դրամը:
Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտը կազմել է 249,9 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսեր

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	32058,1հազ. դրամ
Ճանապարհի ընթացիկ նորոգում /տրանսպորտ/	527,1 հազ.դրամ
Ջրամատակարարում	479,9 հազ.դրամ
Փողոցների լուսավորում	52,0 հազ.դրամ
Կոմունալ	150,0 հազ.դրամ
Հանգիստ,մշակույթ,կրոն	40,0հազ.դրամ
Մանկապարտեզ	6545,0 հազ.դրամ
Երաժշտական դպրոց	15584,7հազ.դրամ
Հանրակրթական դպրոցներին	209,1 հազ.դրամ
Անապահով ընտանիքների օգնություն	620,0 հազ. դրամ
Աղբահանություն և սան.մաքրում /աղբարկղերի ձեռք բերում/	1200,0հազ.դրամ
Բարձրագույն կրթություն	150,0հազ.դրամ
Անասնաբուժական ծառայություն	438,0հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեի գծով ծախսերը կատարվել է 663,0 հազ.դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված 2

Շիրակամուտ համայնքի ավագանու
,,27 " փետրվարի 2020թ. , թիվ 5-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ.ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շիրակամուտ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով համայնքի ֆինանսական կարողությունները, համայնքի հիմնախնդիրների առաջնահերթությունը և այլ չափանիշներ

Հնգամյա ծրագրի շրջանակներում 2019թվականին համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները

1. Համայնքում երկու փուլով իրականացվել են փողոցների գիշերային լուսավորության աշխատանքները, բարերար Հովհաննես Պապիկյանի աջակցությամբ նախ լուսավորվել են Արցախի և 14-րդ փողոցները, հետագայում՝ մոտ 4,5 կիլոմետր երկարություն ունեցող փողոցները/տեղադրվել են 85 լուսամփոփ/: Այս աշխատանքների համար ծախսվել է 610,0 հազար դրամ:

2. Ձեռք են բերվել աղբարկղեր , որի համար ծախսվել է 80,0հազար դրամ, աղբահանությունը իրականացվել է աղբատար մեքենայի միջոցով ,որի համար ծախսվել է 960,0հազար դրամ, , կատարվել է նաև սանիտարական մաքրման աշխատանքներ, ծախսվել է 200,0հազար դրամ:

3. Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու համար ձեռք է բերվել շուրջ 31 տոննա պարարտանյութ ,.դրանով նպաստելով գյուղմթերքների արտադրության ավելացմանը:

4.Կատարվել է ներհամայնքային մաշված ջրագծերի վերանորոգման աշխատանքներ և ընդհանուր ծախսը կազմել է 479,9 հազար դրամ

5.Ճանապարհների վերանորոգման համար ծախսվել է 527,0հազար դրամ:

6. ,,Մագոյի'' խմելու ջրագծի մեկ կիլոմետր երկարության քայքայված հատվածը փոխարինվել է նորով, որի համար ծախսվել է 6մլն.140հազար դրամ:

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 27'' փետրվարի 2020 թվականի N6-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Շիրակամուտ համայնքի 2020թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,,27''-ը փետրվարի 2020թվականի N7 -Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի ,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասինե թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և

1.Շիրակամուտ համայնքի 2020թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից Վոլոդյա Գագիկի Գալստյանին հատկացնել դրամական օգնություն/համաձայն հավելվածի/:

2. Շիրակամուտ համայնքի բյուջեի 09.4.1 դասակարգման 4729 հոդվածից՝ ,,Բարձրագույն մասնագիտական կրթություն", 2019-2020թ.թ. ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսման վարձ փոխանցել ,,Հայաստանի Եվրոպական համալսարան Վանաձորի մասնաճյուղ" Քրիստինե Վալերիկի Թորոսյանի համար/համաձայն հավելվածի/:

3.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 4 /	դեմ /0 /	ձեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Հ.Նալբանդյան			
Ն.Նասլյան			

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու
2020 թվականի փետրվարի 27--ի N7-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Գալստյան Վոլոդյա Գագիկի --երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.
2. Թորոսյան Քրիստինե Վալերիկի - հազար դրամ, /ուսման վարձ/.

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ